ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2024

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1 **Բնութագրումով որոշել հատկանիշը:**

Բնական և հասարակական ցանկացած երևույթ կամ օբյեկտ Երկրի մակերևույթի վրա ունի իր որոշակի հասցեն: Դրա փոփոխությունը կարող է փոխել նաև երևույթի կամ օբյեկտի բնույթը: Աշխարհագրական մտածողության հիմնական հատկանիշներից որի՞ն է վերաբերում այս բնութագրումը.

1) տարածականությանը
2) կոնկրետությանը
3) համընդհանրությանը
4) համալիրությանը

2 **Հյուսիսային կիսագնդում կեսօրին առարկաների ստվերները դեպի հորիզոնի ո՞ր կողմն են ուղղված:**

1) հարավային
2) արևմտյան
3) հյուսիսային
4) արևելյան

3 **Ո՞րն է ամենափոքր մասշտաբը:**

1) 1:42000
2) 1:420000
3) 1:4200000
4) 1:4200

4 **Նկարում ի՞նչ քարտեզագրական պրոյեկցիա է պատկերված:**

1) ազիմուտային
2) գլանային
3) կոնային
4) հասարակածային

5 **Երկրի մակերևույթով անցնող և բևեռներն իրար միացնող երևակայական կիսաշրջագիծը կոչվում է.**

1) միջօրեական
2) առանցք
3) զուգահեռական
4) ուղեծիր

6 **Կորիոլիսի ուժի հետևանքով Երկրի վրա հորիզոնական ուղղությամբ շարժվող մարմինները հյուսիսային կիսագնդում իրենց սկզբնական ուղղությունից շեղվում են.**

1) ձախ
2) վերև
3) ներքև
4) աջ

7 **Գոնդվանայի մասնատումից առաջացած պլատֆորմ է.**

1) Սիբիրականը
2) Հարավամերիկյանը
3) Ռուսականը
4) Հյուսիսամերիկյանը

8 **Ո՞ր օվկիանոսի ափերին են առավել ցայտուն դիտվում երկրաշարժերն ու հրաբխային ժայթքումները։**

1) Հնդկական
2) Ատլանտյան
3) Հյուսիսային սառուցյալ
4) Խաղաղ

9 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Արեգակից ստացվող ջերմության քանակը կախված է վայրի աշխարհագրական լայնությունից և բացարձակ բարձրությունից։
2) Ջերմային բարեխառն գոտիներն ընկած են արևադարձերի միջև։
3) Բևեռներում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են մեծ անկյան տակ։
4) Հասարակածում Արեգակի ճառագայթները հիմնականում ընկնում են փոքր անկյան տակ։

10 **Կլիմայական քարտեզի վրա նույն պահին հավասար ճնշում ունեցող կետերը միացնող գիծը կոչվում է.**

1) իզոթերմ
2) իզոբար
3) իզոհիպս
4) իզոբաթ

11 **Ո՞ր ծովերն ունեն Համաշխարհային օվկիանոսի միջին աղիությունից անհամեմատ փոքր աղիություն:**

1) Չուկոտյան և Բերինգի
2) Բալթիկ և Ազովի
3) Արաբական և Կորալյան
4) Կարայի և Բարենցի

12 **«Լիճ — աշխարհամաս» զույգերից ո՞րն է ճիշտ:**

1) Օնեգա — Աֆրիկա
2) Վերին — Ավստրալիա
3) Արալյան — Ասիա
4) Ուրմիա — Եվրոպա

13 **Շյուղախոտը և փետրախոտը ո՞ր զոնային են բնորոշ:**

1) տափաստանին
2) սավաննային
3) տայգային
4) անապատին

14 **Ի՞նչն է բնորոշ տայգային:**

1) լայնատերև ծառերի առատությունը
2) անբավարար խոնավությունը
3) հողի բազմամյա սառածությունը
4) պոդզոլային հողերի գերակշռությունը

15 **Եքիդնան և բադակտուցը ապրում են.**

1) Ավստրալիայում
2) Հյուսիսային Ամերիկայում
3) Եվրասիայում
4) Հարավային Ամերիկայում

16 **Ո՞ր օդային զանգվածներն են գերիշխում մերձարևադարձային կլիմայական գոտում:**

1) բարեխառն և անտարկտիկական
2) արևադարձային և բարեխառն
3) բարեխառն և արկտիկական
4) հասարակածային և արևադարձային

17 **Կղզի – պետություն է.**

1) Իտալիան
2) Իսպանիան
3) Իրանը
4) Իսլանդիան

18 **Էքսկլավ է.**

1) Ալյասկան
2) Մալթան
3) Մոնակոն
4) Լեսոտոն

19 **Բնակչության թվով գերխոշոր պետություն չէ.**

1) ԱՄՆ-ը
2) Ռուսաստանը
3) ՀԱՀ-ը
4) Հնդկաստանը

20 **Բնութագրումով որոշել գետը:**

Հարթավայրային գետ է: Այն Հյուսիսային սառուցյալ օվկիանոսի ամենամեծ ջրհավաք ավազան ունեցող գետն է: Ո՞ր գետն է.

1) Լենա
2) Ենիսեյ
3) Օբ
4) Պեչորա

21 **Եվրասիայի բարեխառն կլիմայական գոտու վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ամենամեծ տարածքը զբաղեցնում է բարեխառն մուսսոնային կլիմայի մարզը:
2) Ծովային կլիմայի մարզը բնութագրվում է մեղմ ձմեռով, զով ամառով:
3) Ցամաքային կլիմայի մարզում կլիմայի ցամաքայնությունն արևմուտքից արևելք նվազում է:
4) Ամենափոքր տարածքը զբաղեցնում է բարեխառն ցամաքային կլիմայի մարզը:

22 **Ո՞ր ծովածոցը Բալթիկ ծովի մաս չէ:**

1) Բիսկայան
2) Ֆիննական
3) Բոտնիկական
4) Ռիգայի

23 **Օվկիանոսային ո՞ր հոսանքն է անցնում Աֆրիկայի հարավարևելյան ափերի մոտով:**

1) Մոզամբիկի
2) Կանարյան
3) Բենգելյան
4) Սոմալիական

24 **Ո՞ր շարքում է սննդային շղթան *սխալ*:**

1) ցեցե — այծքաղ — առյուծ
2) մուկ — կոբրա — արծիվ
3) ընձախոտ — քարայծ — հեպարդ
4) կարիճ — ճագարամուկ — կոբրա

25 **Ո՞ր լիճն է գտնվում ամերիկյան Մեծ լճերի կազմում:**

1) Աթաբասկա
2) Մեծ աղի
3) Օնտարիո
4) Մեծ արջի

26 **Հյուսիսային Ամերիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

1) Ամենաբարձր և ամենացածր կետերը մայրցամաքի արևմուտքում են:
2) Մեքսիկական ծոցը գտնվում է մայրցամաքի արևելքում:
3) Հյուսիսային ափերը շատ թույլ են կտրտված, և կղզիները քիչ են:
4) Մեծությամբ չորրորդն է՝ Հարավային Ամերիկայից հետո:

27 **Բնութագրումով որոշել նեղուցը:**

Այդ նեղուցը միացնում է 2 օվկիանոս և անջատում է Հրո երկիր կղզին մայրցամաքից: Ո՞ր նեղուցն է:

1) Դարդանելի
2) Թորեսի
3) Մագելանի
4) Բերինգի

28 **Ավստրալիայում ոչ մշտահոս գետերը կամ չոր գետահունները կոչվում են.**

1) սելավներ
2) քրիկներ
3) ուեդներ
4) վադիներ

29 **Ո՞ր կենդանին Անտարկտիդայում և հարակից ջրային տարածքներում *չի* ապրում:**

1) սպիտակ արջը
2) ծովափիղը
3) կապույտ կետը
4) պինգվինը

30 **Ո՞ր երկրներում է բնակչության առավել համաչափ տեղաբաշխում նկատվում։**

1) Մոլդովա և Գերմանիա
2) Ռուսաստան և Կանադա
3) Բրազիլիա և Եգիպտոս
4) Ավստրալիա և Չինաստան

31 **Ո՞ր պնդումն է *սխալ։***

1) Բնակչության մահացության ամենաբարձր ցուցանիշները բնորոշ են աֆրիկյան երկրներին։
2) Բնակչության վերարտադրության առաջին տիպին են պատկանում Ասիայի և Աֆրիկայի զարգացող երկրները։
3) Բնակչության թվի աճի տեմպերը բարձր են վերարտադրության երկրորդ տիպի երկրներում։
4) Բնակչության ցածր բնական աճը բնորոշ է զարգացած երկրներին։

32 **«Ժողովուրդ — ռասա» զույգերից ընտրել *սխալը։***

1) արաբներ — նեգրոիդ
2) շվեդներ — եվրոպեոիդ
3) սենեգալցիներ — նեգրոիդ
4) պարսիկներ — եվրոպեոիդ

33 **Տարբեր ջերմատվությամբ օժտված ռեսուրսների տեսակները միմյանց հետ համեմատելու նպատակով պայմանականորեն ընդունված համարժեքային միավորն անվանում են.**

1) պայմանական գիծ
2) պայմանական միավոր
3) պայմանական վառելիք
4) պայմանական նշան

34 **Ո՞ր պնդումն է ճիշտ։**

1) Գյուղատնտեսական մեքենաշինության ձեռնարկությունները տեղաբաշխված են զարգացած հողագործության շրջաններում։
2) Ավտոմեքենաշինության տեղաբաշխման վրա մեծ է հումքային ու վառելիքաէներգետիկ ռեսուրսների ազդեցությունը։
3) Քիմիական արդյունաբերությունն ունի խիստ սահմանափակ հումքային բազա։
4) Գիտատար և նորագույն տեխնոլոգիաներով հագեցած արտադրությունները կենտրոնացած են զարգացող երկրներում։

35 **Աշխատողների թվով համաշխարհային արդյունաբերության առաջատար ճյուղն է.**

1) թեթև արդյունաբերությունը
2) մետաղաձուլությունը
3) սննդի արդյունաբերությունը
4) մեքենաշինությունը

36 **Արևմտյան Եվրոպայի պետություններից չէ.**

1) Գերմանիան
2) Ֆինլանդիան
3) Շվեյցարիան
4) Ֆրանսիան

37 **Հարավային Եվրոպայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

1) Տարածաշրջանում հաճախակի են երկրաշարժերը, կան գործող հրաբուխներ։
2) Հարուստ է վառելիքաէներգետիկ ռեսուրսներով։
3) Արևադարձային կլիմայական գոտու սահմաններում է։
4) Ընդգրկում է Պիրենեյան, Ապենինյան և Փոքր Ասիա թերակղզիների երկրները։

38 **Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը։**

1. Լեհաստան	ա. Բուխարեստ
2. Հունգարիա	բ. Պրահա
3. Ռումինիա	գ. Վարշավա
4. Չեխիա	դ. Բուդապեշտ

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
2) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-ա, 2-գ, 3-բ, 4-դ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

39 **Ո՞ր պետությունն է գտնվում երկու աշխարհամասում։**

1) Իրաքը
2) Սիրիան
3) Իրանը
4) Թուրքիան



քարտեզ 1

40 **Քարտեզ 1-ում ո՞ր թերակղզին է պատկերված Բ տառով:**

1) Լաբրադորյան
2) Ալյասկա
3) Ֆլորիդա
4) Կալիֆոռնիական

41 **Քարտեզ 1-ում ո՞ր ծոցն է պատկերված Է տառով:**

1) Կալիֆոռնիական
2) Ֆիննական
3) Գվինեական
4) Մեքսիկական

42 **«Լճեր — գոգավորության ծագում» զույգերից ընտրել *սխալը:***

1) Քարի, Սև — սառցադաշտային
2) Սևան, Վանա — տեկտոնահրաբխային
3) Ուրմիա, Ակնա — սողանքապատվարային
4) Փարվանա, Խանչալի — հրաբխային

43 **Ո՞ր պնդումն է *սխալ:***

1) Փամբակի և Բազումի լեռները ՀՀ հյուսիսային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:
2) Բարգուշատի և Վայքի լեռներն ունեն ծալքաբեկորային ծագում:
3) Գեղամա և Վարդենիսի լեռներն ունեն հրաբխային ծագում:
4) Արեգունու և Սևանի լեռները ՀՀ հարավային ծալքաբեկորավոր լեռների և միջլեռնային գոգավորությունների մարզում են:

44 **Ո՞ր մարզն է առավել խտաբնակ:**

1) Արմավիրի
2) Արարատի
3) Կոտայքի
4) Լոռու

45 **ՀՀ-ում տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցության վրա *չի* ազդել.**

1) տղամարդկանց շրջանում բարձր մահացությունը
2) բնակչության կրթական մակարդակը
3) արցախյան ազատամարտը
4) արտագնա աշխատանքի մեկնելու հանգամանքը

46 **ՀՀ ո՞ր քաղաքն է տուֆի արտահանման խոշոր կենտրոն:**

1) Արթիկ
2) Սպիտակ
3) Բերդ
4) Ապարան

47 **Ո՞ր քաղաքի մոտ կա պղնձամոլիբդենային հանքավայր.**

1) Աշտարակ
2) Ագարակ
3) Արտաշատ
4) Աբովյան

քարտեզ 2

48 **Քարտեզ 2-ում ո՞ր մարզն է նշված Զ տառով:**

1) Արագածոտն
2) Շիրակ
3) Գեղարքունիք
4) Կոտայք

49 **Քարտեզ 2-ում ո՞ր հանքային աղբյուրն է նշված Գ տառով:**

1) Լիճքի
2) Հանքավանի
3) Բջնիի
4) Դիլիջանի

50 **Համախառն արտադրանքի ծավալով ԼՂՀ արդյունաբերության առաջատար ճյուղն էր.**

1) թեթև արդյունաբերությունը
2) փայտամշակման արդյունաբերությունը
3) մեքենաշինությունը
4) հանքագործական արդյունաբերությունը

51 **Ո՞ր մայրցամաքում է անապի գոտին:**

1) Ավստրալիա
2) Հարավային Ամերիկա
3) Եվրասիա
4) Հյուսիսային Ամերիկա

52 **Տրված բնական ռեսուրսներից որո՞վ են լեռնային տարածքները համեմատաբար աղքատ:**

1) մետաղային
2) ռեկրեացիոն
3) վառելիքային
4) ջրաէներգետիկ

53 **Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.**

1) սարքաշինությունը
2) կոնյակի արտադրությունը
3) պղնձաձուլությունը
4) կարի արտադրությունը

54 **Ի՞նչ դեր ունի մթնոլորտում տարածվող օզոնի շերտը.**

1) ապահովում է ներքնոլորտում օդային զանգվածների շրջանառությունը
2) խոնավ եղանակներին առաջացնում է լուսաքիմիական սմոգ
3) Երկրի վրա թթվածնի ստեղծման միակ աղբյուրն է
4) կլանում է Արեգակի ուլտրամանուշակագույն և տիեզերական ճառագայթները

55 **Ջրավազաններն աղտոտող արհեստական նյութերից են.**

1) գեյզերների ջրերում լուծված հանքային աղերը
2) հարթավայրային գետերով տեղափոխվող անտառանյութը
3) քիմիական պարարատանյութերը
4) գետերի ջրերում լուծված հանքային աղերը

56 **Գրել նավարկելի ջրանցքների համարները:**

1) Բերինգի
2) Պանամայի
3) Կուկի
4) Ֆլորիդայի
5) Զոնդյան
6) Սուեզի
7) Թաթարական
8) Քիլի

57 **Գրել այն երկրների համարները, որոնք հանրապետություններ են:**

1) Շվեդիա
2) Դանիա
3) Լատվիա
4) Ֆինլանդիա
5) Մեծ Բրիտանիա
6) Եգիպտոս
7) Իսպանիա
8) Ճապոնիա

58 **Գրել այն ժողովուրդների համարները, որոնք դավանանքով ուղղափառ են:**

1) սերբեր
2) ֆրանսիացիներ
3) շվեդներ
4) բելառուսներ
5) իսպանացիներ
6) չեխեր
7) բրազիլացիներ
8) ավստրալացիներ

59 **Գրել այն երկրների համարները, որոնք ուրբանիզացման առավել բարձր մակարդակ ունեն:**

1) Արգենտինա
2) Հնդկաստան
3) Չինաստան
4) Աֆղանստան
5) Մոզամբիկ
6) Բանգլադեշ
7) Բելգիա
8) Ճապոնիա

60 **Գրել Արաքսի ավազանին պատկանող վտակների համարները:**

1) Ճորոխ
2) Գետիկ
3) Զորագետ
4) Մակու
5) Հրազդան
6) Խաչենագետ
7) Ողջի
8) Մեծամոր

61 **Գրել ՀՀ այն էլեկտրակայանների համարները, որոնք ջրային *չեն:***

1) Քանաքեռի
2) Մեծամորի
3) Արզնիի
4) Վանաձորի
5) Տաթևի
6) Շամբի
7) Սևանի
8) Զորագետի

62 **Տրված պետությունները դասավորել բրնձի համախառն բերքի աճման կարգով:**

1) Հնդկաստան
2) Բանգլադեշ
3) Չինաստան
4) Ինդոնեզիա

63 **ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով:**

1) Ախուրյանի 2) Կեչուտի 3) Սպանդարյանի

64 **Երկու քաղաքներ հասարակածի վրա են: Դրանցից մեկը արլ. ե. 40°-ի վրա է, իսկ մյուսը՝ արմ. ե. 70°-ի: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրով:**

(65-66) Լեռան ստորոտին օդի ջերմաստիճանը 13˚C է, գագաթին՝ 1˚C: Ստորոտը ծովի մակարդակից 1400 մ բարձրության վրա է (հաշվարկը կատարել 6˚-ով).

65	Որոշել լեռան բացարձակ բարձրությունը:

66	Որոշել լեռան հարաբերական բարձրությունը:

67	Որքա՞ն է երկրի բնակչության բացարձակ բնական աճը, եթե այդ երկրի բնակչության թիվը 2,5 մլն է, բնական աճի գործակիցը՝ 10 ‰:

68 **Երկրի գետային տրանսպորտի բեռնաշրջանառությունը 9 մլն տ·կմ է, իսկ բեռների փոխադրման միջին հեռավորությունը՝ 150 կմ։ Որքա՞ն է տարեկան փոխադրվող բեռների ծավալը։**

69 **Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը։
2) Թեթև արդյունաբերության գլխավոր կենտրոնը Շանհայն է։
3) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի ու ցեմենտի արտադրությամբ։
4) Հարուստ է ածխի և երկաթաքարի պաշարներով։
5) Սև մետաղաձուլությունը զարգանում է բացառապես ներկրվող հումքի հիման վրա։
6) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում։

70 **ՀՀ Արագածոտնի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ։**

1) Տնտեսության զարգացման գործում մեծ դեր է խաղում արևմտյան մասով անցնող Երևան — Թբիլիսի երկաթուղին։
2) Անասնապահության ենթաճյուղերից առավել զարգացած են խոզաբուծությունն ու թռչնաբուծությունը։
3) Ռոգովի հողագործության համար հիմք են հանդիսացել Թալինի և Արզնի-Շամիրամի մայր ջրանցքները։
4) Աչքի է ընկնում գինու, կոնյակի, կաթի և կաթնամթերքի արտադրությամբ։
5) Հողաբարելավման կարևոր տեսակներից է ոռոգումը և քարամաքրումը։
6) Միջին և բարձր գոտիներում առավել զարգացած են խաղողագործությունն ու պտղաբուծությունը։